ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՏԶՆՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-17-05 -17-17

ք. Երևան <<02>> << 05 >> 2017թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա.Շահնազարյանի,** որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և **«Սմարթլայն» ՍՊԸ-ն,** ի դեմս Ընկերության տնօրեն **Տ.Ղարիբյանի** (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի** / այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

3.1.8 Ձնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **1807678** (մեկ միլիոն ութ հարյուր յոթ հազար վեց հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային

օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև

Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Սմարթլայն» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե ք.Երևան, Վարդանանց 110
Հ/Հ՝ **900011010320, 900011004711,900011010312**	<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 02505983	ՀՎՀՀ 01548908
Մ. Շահնազարյան	**Տ. Ղարիբյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
<< 02 >> << 05 >> 2017թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

N << ՏՀՆՆ-ԾՀԱՊՁԲ-15/3-17-05-17

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ
և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ չափ.	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/	A4, չկավճած էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝ առնվազն 80 գ/մ² (առանց շեղումների), չափերը՝ 21.0x29.7 մմ. (առանց շեղումների), առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության: Նախատեսված՝ միակողմանի և երկկողմանի տպագրության համար: Պիտանի՝ լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար: Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ: Պայծառությունը՝ 100%-ից ոչ պակաս, հաստությունը՝ 108մկմ, անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս, անհարթությունը ոչ ավել՝ 180մլ/ր՝, խոնավությունը՝ 3,5-4,5%, արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի, օդի անցանելիություն՝ 1700 մլ/ր, գործարանային փաթեթավորման: Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների): Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ, տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3%, ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ³, ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ³, **Pioneer**:
2	Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/	Թուղթ պատճենահանման A4 չափսի, (210x297մմ) ըստ ԳՕՍՏ 6656-76, թղթի կարգը՝ Ա /պրեմիում/, թղթի զանգվածը՝ 80 գ: Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ: Պայծառությունը՝ 100%-ից ոչ պակաս, հաստությունը՝ 108մկմ, անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս, անհարթությունը ոչ ավել՝ 180մլ/ր՝, խոնավությունը՝ 3,5-4,5%, արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի, օդի անցանելիություն՝ 1700 մլ/ր: Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ, տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3%, ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ³, ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ³, **Navigator**:
3	Էջաբաժանիչ, թղթե	Էջաբաժանիչ, պլաստիկ, A4 ֆորմատի (210x297մմ), գունավոր, 12 բաժանում, **Atlas**:
5	Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար	Ծրար՝ A4 (210x297մմ) ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով, N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող:
6	Թղթապանակ, կոշտ կազմով	Թղթապանակ ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի (210x297մմ) ձևաչափի թղթերի համար, ներսի մակերեսը լամինապատված, 4-8սմ հաստությամբ, գույնը՝ սև, կարմիր, կապույտ, պատվիրատուի ընտրությամբ, **AN PAL:**
7	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթից, A4 (210x297մմ) ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու համար, 70 միկրոն, ամուր եզրերով, հարթ մակերեսով, փայլուն:
8	Թղթապանակ	Թղթապանակ սեղմակով, A4 ֆորմատի (210x297մմ), գույնը կապույտ, կանաչ, կարնիր, պատվիրատուի ընտրությամբ:
9	Գրիչ գնդիկավոր	Գրիչ գնդիկավոր, 0.6մմ ծայրով, ռետինե բռնակով, բարձր որակի, տարբեր գույների, պատվիրատուի ընտրությամբ, **Cello Finegrip**:
10	Գրիչ գելային	Գրիչ գելային, 0,7 մմ ծայրով, տարբեր գույների, պատվիրատուի ընտրությամբ, բարձր որակի, **Skyglory**:
11	Սոսնձամատիտ, գրասենյակային	Սոսինձ-մատիտ, չոր, 15գր, **Fantastick**

12	Սոսնձամատիտ, գրասենյակային	Սոսինձ-մատիտ, չոր, 8գր, **Flamingo:**
13	Գծանշիչ	Մարկեր տեքստային, տարբեր գույնի, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, բարձր որակի, շեղ ծայրով, **Flamingo** :
14	Շտրիխներ	Ուղղիչ գրիչ, 10մլ, **Pointer:**
15	Շտրիխներ	Ուղղիչ գրիչ, 8մլ, **Dolphin Whito** :
16	Սեղմակ, փոքր	Մետաղական, լայնությունը 19 մմ, 40-60 էջ ամրացնելու համար, **HUA JIE:**
17	Սեղմակ, միջին	Մետաղական, լայնությունը 25 մմ, 60-90 էջ ամրացնելու համար, **HUA JIE:**
19	Կարիչ մինչև 20 թերթի համար	Գրասենյակային կարիչ մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար, ծակման խորությունը 64մմ բարձր որակի, **DL:**
20	Ապակարիչ	Գրասենյակային ապակարիչ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար, **DL:**
21	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով՝ N 10, տուփի մեջ 1000 հատ, **Kangaro:**
22	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով ՝ N 24/6, տուփի մեջ 1000 հատ, **Kangaro** :
23	Դակիչ /ծակոտիչ/ միջին	Դակիչ 25 էջի համար, **Kangaro** :
27	Հաշվասարք, գրասենյակային	Հաշվիչ սեղանի, առնվազն 12 նիշանի, մեծ չափսի, ինքնալիցքավորվող, **Collin** :
29	Նոթատետր	Նոթատետր A4 ձևաչափի (210x297մմ), 50էջ, տողանի, առանձնացվող էջերով, գույնը՝ սպիտակ/դեղին, **Paperline** :
32	Ամրակ մետաղյա, փոքր	Փոքր, գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, 25-33մմ երկարությամբ, տուփի մեջ 100 հատ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ, **HUA JIE:**
Մատակարարման վայրը՝ ք. Երևան, Միեր Մկրտչյան 5:		

ԳՆՈՐԴ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ **900011010320, 900011004711,900011010312**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
[illegible]

_______________ **[illegible]**
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
Հասցե ք.Երևան, Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>>ՊԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

_______________ **Տ. Ղարիբյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

N << ՏՀՆՆ-ԾՀԱՊՁԲ-15/3-17-05-17-17

Հավելված N 2
<< 06 >> << 05 >> 2017 թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ
և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ չափ.	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ նախարարության աշխատակազմ	տուփ	1699	-	-	-	-	500	849500	-	-	500	849500
	Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ նախարարի աշխատակազմ	տուփ	1699	-	-	-	-	285	484215	-	-	285	484215
2	Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	տուփ	1699	-	-	30	50970	35	59465	-	-	65	110435
3	Էջաբաժանիչ, թղթե նախարարության աշխատակազմ	հատ	520	-	-	-	-	100	52000	-	-	100	52000
5	Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար նախարարության աշխատակազմ	հատ	29	-	-	300	8700	300	8700	-	-	600	17400
6	Թղթապանակ, կոշտ կազմով նախարարության աշխատակազմ	հատ	535	-	-	39	20865	60	32100	-	-	99	52965
	Թղթապանակ, կոշտ կազմով նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	535	-	-	19	10165	20	10700	-	-	39	20865
7	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ նախարարության աշխատակազմ	հատ	13.8	-	-	1440	19872	1560	21528	-	-	3000	41400
	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ նախարարի աշխատակազմ	հատ	13.8	-	-	60	828	-	-	-	-	60	828
	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության	հատ	13.8	-	-	50	690	-	-	-	-	50	690

	տեսչական մարմին												
8	Թղթապանակ Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	295	-	-	30	8850	-	-	-	-	30	8850
9	Գրիչ գնդիկավոր Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	68	-	-	30	2040	-	-	-	-	30	2040
10	Գրիչ գելային Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	120	-	-	30	3600	-	-	-	-	30	3600
11	Սոսնձամատիտ, գրասենյակային Նախարարության աշխատակազմ	հատ	235	-	-	50	11750	50	11750	-	-	100	23500
12	Սոսնձամատիտ, գրասենյակային Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	150	-	-	20	3000	-	-	-	-	20	3000
13	Գծանշիչ Նախարարության աշխատակազմ	հատ	138	-	-	100	13800	120	16560	-	-	220	30360
14	Շտրիխներ Նախարարության աշխատակազմ	հատ	160	-	-	-	-	30	4800	-	-	30	4800
15	Շտրիխներ Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	190	-	-	-	-	20	3800	-	-	20	3800
16	Սեղմակ, փոքր Նախարարության աշխատակազմ	հատ	9	-	-	-	-	960	8640	-	-	960	8640
17	Սեղմակ, միջին Նախարարության աշխատակազմ	հատ	18	-	-	390	7020	570	10260	-	-	960	17280
	Սեղմակ, միջին Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	18	-	-	10	180	10	180	-	-	20	360
19	Կարիչ մինչև 20 թերթի համար Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	480	-	-	20	9600	-	-	-	-	20	9600
20	Ապակարիչ Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	140	-	-	-	-	10	1400	-	-	10	1400
21	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր Նախարարության աշխատակազմ	տուփ	60	-	-	95	5700	-	-	-	-	95	5700
22	Կարիչի մետաղալարե կապեր, միջին Նախարարության աշխատակազմ	տուփ	115	-	-	100	11500	-	-	-	-	100	11500
23	Դակիչ /ծակոտիչ/ միջին Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	850	-	-	5	4250	-	-	-	-	5	4250
27	Հաշվասարք, գրասենյակային Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	1750	-	-	9	15750	9	15750	-	-	18	31500
29	Նոթատետր Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	հատ	280	-	-	20	5600	-	-	-	-	20	5600
32	Ամրակ մետաղյա, փոքր Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	տուփ	80	-	-	-	-	20	1600	-	-	20	1600

Ընդամենը Նախարարության աշխատակազմ 900011010320	-	-	-	99207	-	1015838	-	-	-	1115045
Ընդամենը Նախարարության աշխատակազմի շենքի վերահսկողության տեխնիկական մարմին 900011004711	-	-	-	114695	-	92895	-	-	-	207590
Ընդամենը Նախարարի աշխատակազմ 900011010312	-	-	-	828	-	484215	-	-	-	485043
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	214730	-	1592948	-	-	-	1807678

ԳՆՈՐԴ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝ **900011010320, 900011004711,900011010312**
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505983

_______________ **[illegible]**
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
Հասցե ք.Երևան, Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

_______________ **Տ. Ղարիբյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«02» «05» 2017 թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

N «ՏՀՆՆ-ԵՀԱՊՁԲ-15/3-17-05-17-17

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«» դրամ

Հ/հ չափ	Ապրանքի անվանումը	Տն. դասս	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Տնդամենը Տարի
1	Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	-	-	588465	588465	588465	849500	849500	849500	**849500**
	Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ նախարարի աշխատակազմ	4261	-	-	-	-	-	-	341872	341872	341872	484215	484215	484215	**484215**
2	Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ նախարարության աշխատակազմի շրջայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	50970	50970	110435	110435	110435	110435	110435	110435	**110435**
3	Էջաբաժանիչ, թղթե նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	-	-	52000	52000	52000	52000	52000	52000	**52000**
5	Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	8700	8700	17400	17400	17400	17400	17400	17400	**17400**
6	Թղթապանակ, կոշտ կազմով նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	20865	20865	52965	52965	52965	52965	52965	52965	**52965**
	Թղթապանակ, կոշտ կազմով նախարարության աշխատակազմի շրջայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	10165	10165	20865	20865	20865	20865	20865	20865	**20865**

	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	19872	19872	41400	41400	41400	41400	41400	41400	**41400**
7	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ նախարարի աշխատակազմ	4261	-	-	-	-	828	828	828	828	828	828	828	828	**828**
	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ նախարարության աշխատակազմի շտկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	690	690	690	690	690	690	690	690	**690**
8	Թղթապանակ նախարարության աշխատակազմի շտկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	8850	8850	8850	8850	8850	8850	8850	8850	**8850**
9	Գրիչ գնդիկավոր նախարարության աշխատակազմի շտկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	2040	2040	2040	2040	2040	2040	2040	2040	**2040**
10	Գրիչ գելային նախարարության աշխատակազմի շտկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	**3600**
11	Սոսնձամատիտ, գրասենյակային նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	11750	11750	23500	23500	23500	23500	23500	23500	**23500**
12	Սոսնձամատիտ, գրասենյակային նախարարության աշխատակազմի շտկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	**3000**
13	Գծանշիչ նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	13800	13800	30360	30360	30360	30360	30360	30360	**30360**
14	Շտրիխներ նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	-	-	4800	4800	4800	4800	4800	4800	**4800**
15	Շտրիխներ նախարարության աշխատակազմի շտկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	-	-	3800	3800	3800	3800	3800	3800	**3800**

16	Սեղմակ, փոքր Նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	-	-	8640	8640	8640	8640	8640	8640	**8640**
17	Սեղմակ, միջին Նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	7020	7020	17280	17280	17280	17280	17280	17280	**17280**
	Սեղմակ, միջին Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	180	180	360	360	360	360	360	360	**360**
19	Կարիչ մինչև 20 թերթի համար Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	9600	9600	9600	9600	9600	9600	9600	9600	**9600**
20	Ապակարիչ Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	-	-	1400	1400	1400	1400	1400	1400	**1400**
21	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր Նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	5700	5700	5700	5700	5700	5700	5700	5700	**5700**
22	Կարիչի մետաղալարե կապեր, միջին Նախարարության աշխատակազմ	4261	-	-	-	-	11500	11500	11500	11500	11500	11500	11500	11500	**11500**
23	Դակիչ /ծակոտիչ/ միջին Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	**4250**
27	Հաշվասարք, գրասենյակային Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	15750	15750	31500	31500	31500	31500	31500	31500	**31500**
29	Նոթատետր Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	**5600**
32	Ամրակ մետաղյա, փոքր Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4261	-	-	-	-	-	-	1600	1600	1600	1600	1600	1600	**1600**
Ընդամենը Նախարարության աշխատակազմ 900011010320			-	-	-	-	99207	99207	854010	854010	854010	1115045	1115045	1115045	1115045

Ընդամենը Նախարարության աշխատակազմի շենքային վերահսկողության տնտեսական մարմին 900011004711	-	-	-	-	114695	114695	207590	207590	207590	207590	207590	207590	207590
Ընդամենը Նախարարի աշխատակազմ 900011010312	-	-	-	-	828	828	342700	342700	342700	485043	485043	485043	485043
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	-	**214730**	**214730**	**1404300**	**1404300**	**1404300**	**1807678**	**1807678**	**1807678**	**1807678**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՎՀՀ **900011010320, 900011004711,900011010312**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02503983

[illegible]ազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Սմարթլայն» ՍՊԸ
Հասցե ք.Երևան, Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 4
«02» «05» 2017թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

N ՀՀ ՏՀՇՆ-ԷՀԱՊՁԲ-15/3-17-05-17-17

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____ _____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< 05 >> << 05 >> 2017թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

N << ՏՐՆՆ-ԵՀԱՊՁԲ-15/3-17.05-17

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն